ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Հողի մակերեսային վարը կամ ինչպես ընդունված է ասել՝ անթև գութանով վարը Հայաստանում լայնորեն կիրառվել է դարեր շարունակ: Վարի այս եղանակը նույնիսկ պատկերված է Իշխանասարի ժայռապատկերներում: Այն հողի վերին շերտը ոչ թե կտրում և շուռ է տալիս, ինչպես ներկայումս կիրառվում է գյուղատնտեսության մի շարք մշակաբույսերի աճեցման համար, այլ միայն կտրում է և առանց շուռ տալու փխրեցնում: Վարի այս եղանակը արդյունավետ է հատկապես հողապարման ենթակա չորային գոտու հողերում և լանջերին կատարվող վարի ժամանակ: Այն հնարավորություն է տալիս մասնակիորեն պահպանել հողում առկա խոնավությունը, որը խիստ անհրաժեշտ է սերմի ծլարձակման համար: Վարի այս եղանակը առանձնակի ուժեր չի պահանջում և մատչելի է ինչպես խոշոր, նույնպես և մանր գյուղացիական տնտեսությունների համար: